

ժադրութիւնը . ո՞ր է Պարսկէնիւ-
յի խոստացեալ վերաքննութիւնը .
այն կանոնադրութեան , որ Հայաս-
տանեայց եկեղեցին Ռուսիոյ մէջ կաշ-
կանդած և գերի ըրած է : Ռուսիոյ
Հայք և մասնաւորապէս Մշակի խում-
բադիրն եթէ քաջութիւն ունենին ,
ինչու չկրցին մինչև ցարդ այդ վե-
րաքննութիւնը պահանջել և թուր-
քիոյ Հայոց ռազմին չձայնակցեցան :
Ինչո՞ւ չեն ջանար զիրենք և իրենց
ազգութիւնը պաշտպանել այն ազգա-
կու շարժարտագրութեան դէմ , որ
Հայաստանեայց եկեղեցին և ազգու-
թիւնը ջնջելու կը ճգնէ , որպէս զի
անոր աւերակներուն վրայ ալ բարձ-
րացնէ Սլաւոն միութեան դրօշը :
Կարծենք Ռուսիոյ մէջ ալ խելքը դը-
լուելը Հայ մը չկայ որ համազում
չըլլայ այս ճշմարտութեանց . ուստի
տարակոյց չունինք որ Մշակի յօդ-
ւածները ճշմարիտ Հայու մը գրչէ
չեն կրնար եղած ըլլալ , այլ կամ
Ռուսի մը , կամ ազգութեան մը , որ
չենք գիտեր ինչ նպատակու իւր
թուրքիոյ ազգակիցներն այսպէս Ռու-
սիոյ փառաշիրտութեան զոհելու փորձ
կը փորձէ :

ԳԱՂՈՒԱԾՔ ԾԵՒՐՈՊԱԿԱՆ ԼԲՆԳՐԱՅ

Բէշթա 21 օգոստոս.—Երէկ ճա-
կատամարտ մը տեղի ունեցաւ Ա-
լէքսանդրի և Նիշի մէջ տեղը , և բո-
լոր օրը տեսցի :

Այսօր ալ ճակատամարտը կը շա-
րունակէ : Հաւանական է որ թուրքե-
րէն Ալէքսանդրի մօտենան , ուր մեծ
ճակատամարտ մը տեղի պիտի ունե-
նայ : Եթէ Ալէքսանդրի ամբողջութիւն
ները թուրքերէն տանուին , Սերվի-
տիքը գեռ ընդդիմութեան միջոց-
ներն ունենին ի Տէրիկրատ , որ Ալէք-
սանդրէն աւելի ամբողջեալ է :

Վիեննա 21 օգոստոս.—Գիւտնադի-
տական տկուսիւնը մէջ կը հաւաս-
տեն թէ շարժում օրը Սիւրովայի առ-
ջն արուած ճակատամարտին վրայ
Չէրնայէֆ զօրավարին Պէրիատ զոր-
քած տեղեկագիրն , որ այն ճակա-
տամարտի իրեն Սերվիտիկան ղեկա-
նելու յաջողութիւն կը ծանուցա-
նէ , Ռուսական կառավարութեան
խաղաղական տրամադրութիւնները
փոխել է : Կըսուի թէ Ալէքսանդր
կայսրը մինչև իսկ միջնորդական փոր-
ձերէն ետ կեցեր է :

Աթին 21 օգոստոս .— Կ. Պօլոյ
պաշտօնական վայրերուն մէջ իբրեւ
ստորգ կը խօսուի թէ Նիշաթիէֆ զօ-
րավարն այս անգամ Կ. Պօլի վերա-
դարձած ժամանակ՝ քրիստոնէից
խոստացումը բարենորոգմանց գոր-
ծողութիւնն և Գարդանիկի նեղ-
ցին բարձր ազգայնական տրամադ-
րականներուն առջև բացօթի պա-
հանջող ծանուցագիր մը կը բերէ :
Այս ծանուցագիրն Աստրիոյ կառա-
վարութեան հաղորդուելով , տնօր
ալ հաւանութիւնը կանխու ստացեր
է եղեր :

Պէրիատէն Անգլիական Տէյլի—
թէյէկրաֆ լրագրին ուղղեալ հեռա-
գիր մը կը ծանուցանէ թէ Սերվիտ
12 միլիոն ֆրանքի նոր փոխառու-
թիւն մը ըրեր է Ռուսիայէն :

Իպրայիլ հրատարակեալ Հէրմէս
անուն յոյն լրագիրը կըսէ թէ ամեն
օր բազմաթիւ ռուս սպայք՝ քաղա-
քային կերպարանք Բուսանիայէն
կանցնին Սերվիտ կերթան և հոն կա-
մաւոր կը դրուին : Յիշեալ թերթն
այս կերպիւ Սերվիտ անցնող ռուս
զինուորականաց թիւը 20000 ի կը
հասցնէ :

Ալէքսանդրիայէն օգոստոս 21
թուով Լոնտոնի Սթանտարտ լրագ-
րին քաջութեամբ հեռագիր մը կը ծա-
նուցանէ թէ Հայկէստանի տղա-
տամբ ցերեպեղներէն մին՝ Վարա-
Միքայէլ՝ Հայկէստանի թագաւորին զօ-
րքերուն յաղթել է Չաքրակու լո-
ւած տեղը , և թէ 15 դէպ ալորի և
1500 այր կին և ազալ ցարդուեր են ,
որոց մէջ Շվէտ քարոզիչ մը , Անգ-
լիացի մը և երկու Յոյնք կան եղեր :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիեննա 26 օգոստոս.
Վիեննա նորոգ Սերվիտիկան գործա-
կատար Պ. Ջուքիլ երէկ Սերվիտ խնդ-
րագիրը կառավարութեան մատուցեց , որով
Սերվիտ կառավարութիւնը խաղաղու-
թեան համար անհրաժեշտ միջնորդու-
թիւնը կը խնդրէ :

Սերվիտ միւս մեծ տերութեանց ալ
նմանօրինակ խնդրագիր տուաւ :

Լրագիրը առհասարակ այն միջնորդու-
թեան խնդրոյն վրայ կը խօսին :

Ռուսիայու 26 օգոստոս.
Բաղդադիցայի մօտ ճակատամարտ մը
անհրաժեշտ է , ուր երկու կողմանէ մեծ
զօրութիւն կայ զուգահեռաբար :

Կը հաւատեն թէ Միտիթիները խնա-
չէզօրութիւն պիտի պահեն :

Բէշթա 26 օգոստոս.
Տեղւոյ Լոյս լրագիրը Պէրիատէն ե-
կած հեռագրերէ առելով կը ծանուցանէ
թէ Միտիթիներն առջի օրը տերութեանց
հրապարակեցին ի ժողով զօմարելով
յայտներ է թէ վեց օրէ ի վեր պատե-
րազմ կըլլայ Ալէքսանդրի առջև , և թէ
ժամանակ է արիւնհեղուքիւնը դադ-
րեցնելու և Բ. Գրան հետ խաղաղութիւ-
նը վերահաստատելու : Հետեւաբար կա-
ղաչէր զանոնք որ իւր այս փափաքն ի-
րենց կառավարութեանց ծանուցանեն :
Տէրութեանց երեսփոխանները խոստա-
ցան անմիջապէս հեռագրել իրենց կա-
ռավարութեան : Պ. Սերվիտ նմանապէս
չըջարեցական մ'աւելցն օտար տէրու-
թեանց քով գտնուող Սերվիտիկան զօր-
ծակատարաց , մասնաւորապէս միանգա-
ւայն թէ ըլլալէր կարգադրութեան մէջ
Գարտապէս ալ պիտի հասցուի :

Լոնտոն 28 օգոստոս.

Վաթ. Բոնա.	13 1/4
Ֆոթ.	1865 14 1/2
»	1869 14 1/2
»	1874 22 1/4
»	1872 23 1/4
»	1873 13 5/8
Եղիպոս.	48 13/16
Անգլ. Բոնա.	96 5/16

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Սուրբ Նախորդ կուսակալ և ոյ-
ժում Պետական խորհրդոյ վարչական
ճիւղին Գերմանիայի Համար փա-
շտն Մապէյն Միւլլերի անուանեցաւ
փոխանակ Նախի փաշային :

Բ. Գուռը վերջին օրերն Աստրի-
ոյ կառավարութեան գիւմելով թղթ-
առութիւն խնդրեց Հէրմէյն մէջ
վերադառնալ հաշարի չափ զօրական
և սպայ Սաւորիոյ հողէն անցունելով
նաւ դնելու , որովհետև ցամաքէն
Մէթրովիցայի և Սէլանիկի ճանքով
փոխադրութիւնը խնաւ երկար և
տաժանելի է : Աստրիոյ կառավա-
րութիւնն ալ , որչափ որ Բէշթի նա-
ւահանգիստը դոցած է , Բ. Գրան
խնդիրը մարդասիրական պատճառ-
ներով ընդունեց , և թոյլ տուաւ որ
Օսմանեան շոգենաւ մ'երթայ Բէշ-
թի ծոցին բերանը , և Մէթրովիէն
նաւակներով հոն զրկուած վերադա-
նեն առնու : Այս պաշտօնը Ասիոյ շո-
գենաւին յանձնուելով , կիրակի օրը
մայրաքաղաքէս զօրք և ռազմամը-
թերք առած Անիթիվարի գնաց , և վե-
րադարձին ալ Բէշթ պիտի հանգիւպի
վերջոյնեալ վերադառնելուն առնելու :

Բարձր. Մեծ-Եղարքոսն և Միտ-
հաթ փաշան երկուշաբթի առաւօտ
Պէպէք Բարձր. Շէյխիւլ-խալիֆէն-
տիին ազարանքն երթալով երկար
խորհրդակցութիւն մ'ըրին :

Լա թիւրքի լրագիրը Վեհ. Սու-
թանին կղզիներն երթալ բնակելու
գիտաւորութիւնը սուտ կը հանէ :

Վեհ. Սուլթանն երկրորդ կարգի
Մէհմետի պատուանշան շնորհեց Վա-
նայ նորընտիր կառավարիչ Վսեմ.
Ջիա փաշային :

Նորին փեսմաթիւնն երէկ վար-
չութեան Գալ . Ժողովին այցելու-
թիւն տուաւ . ի Ղալաթիա , ուր գու-
մարուած էր Ժողովն , և վանայ վիճա-
կին վրայ մանրամասն տեղեկութիւն
ստանալով , երկրին Հայ Ժողովրդոց
անգործութեանն ու ապահովութեան
համար իրեն պարտքն եղած ամեն
վոյթ և ջանք ի գործ դնել խոս-
տացաւ :

Երկուշաբթի օրը 13 Սերվիտի
պատերազմական գերիներ ալ բեր-
ւեցան Կ. Պօլիս և Ստարապետի դու-
ռը դրուեցան՝ արդէն հոն գտնուող
գերիներուն քով :

Շաբաթ իրիկուն Էֆ. քեար անուն
թուրք լրագրին և անոր ետեւէն Լա
թիւրքին հանած յաւերածին տուած
լուրը թէ Ալէքսանդրի տանուեր է ,
կանխահաւ է :

Պատիւէթի խօսքին նայելով , Ա-
լէքսանդր քաղաքը կը ռմբակոծի
կայսերական զօրքերէն , և կարեւոր
ամրոց մը միայն մնացեր է աւանուելու :

Հասարակութեանն անհամբերու-
թեամբ սպասուած թղթագրամը
վերջապէս շաբաթ օրը չըջարեաւ
թեան ելաւ :

Օսմ. կայսերական Պաշտոնի թղթ-
թագրամին պղինձ դրամաց հետ 130
զրչի հաշուով փոխանակութիւնը դի-
րացնելու համար՝ երկու դռնակ
բացաւ , մին Ղալաթիա , Պանքային
տակը , միւսն ալ Կ. Պօլիս ճէզայիլի
խանին տակը :

Նախորդ Սուլթանին օրով ճէպի
Հիւմայուի երկամիջ հաշիւները
քննելու համար յանձնաժողով մը
կազմուեցաւ Նախի փաշային նա-
խագահութեամբ :

Վաթիթ լրագիրը կը ծանուցանէ
թէ կայսերական կառավարութիւնն
այլ և այլ կարգի պատուանշաններ և
վարձատրութիւններ շնորհեց է այն
ամեն իւրաքանչեւ օրք Պուլ-
շարի վերջին անցից ժամանակ դը-
թութեանն ու մարդասիրութեան
փորձեր տուեր են Պուլշար գիւղա-
ցիները պաշտպանելով :

Նոյն վարձատրութիւնն եղեր է
նաւ այն քանի մը Պուլշարաց , որք
պատամարտութեան ժամանակ իրենց
դիմել է ապաստան խնդրող իւրաք-
աները պաշտպանելու ազատելու են :

Ս. Պատրիարք հօր բարեխօսական
միջնորդութեան վրայ , Բ. Գուռը խա-
փանեալ հայ լրագրաց վերստին հրա-
տարակութեան հրաման չնո հեց :

Յունաց Պատրիարքին հրամանաւ
կիրակի օրը մայրաքաղաքիս յունաց
եկեղեցիներուն մէջ յատկապէս ա-
ղօթք կարգացուեցաւ Վեհ. Սուլ-
թանին շուրջ առողջանալուն համար :

Բարձր. Մայր թագուհին՝ այս բա-
նը լոնլով՝ յատուկ պաշտօնատար մը
զրկեց Ֆէնէրի յունաց Պատրիարքա-
րանը , և իւր բարձր գահութիւնը
յայտնեց՝ միանգամայն փոխադարձ
առողջութիւն մտղմելով Պատրիար-
քին , որ քանի մ'օրէ ի վեր հիւանդ
է եղեր :

Ուշաքէն կը գրեն թէ մօտակայ
Եփեսոս անուն փոքր քաղաքին քո-
վի գետակն տառա անձրեւներէ դի-
շերը յորդելով քաղաքը կոխել է , և
մինչև որ բնակիչներն խմանալով փախ-
չելու աճապարեր են , յիսուէն ա-
ւելի անձինք ջուրերէն քշուելով խեղ-
դուեր են : Յիսուէն աւելի ալ տու-
ներ կործաներ են :

ԱՌՍԱ ԵՆՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԵՆՆԱԿԱՆ ՈՒՄՈՒՄՈՒԹՅՈՒՆ

17 օգոստոս. Երեքշաբթի իրիկուն	13. 36
18 օգոստոս. չորեքշաբթի առաւօտ	
բացուեցաւ	14. 5
Կ. Պօլիս 17 օգոստոս.	
Վաթիթ Էփեսոսի քաղաքի Էփեսոսի 2	12
» Գիւտնադիտութեան »	1. 22
Կ. Պօլիս Պանքային »	3.
Քրէտի Վէնէրա »	2. 35
Քրէտի Սթրաս-Թիւրք »	
Երկուշաբթի »	40
Փոթ. 1863 »	68
» 1865 »	68
» 1869 »	63
» 1872 »	21 1/2
» 1873 »	61
Թրաքիայ »	4 5

ԵՆՆԱԿԱՆ ԴՆՈՒՄՈՒԹՅՈՒՆ

16 օգոստոս

Անգլ. վրա »	140 10
Նաւայէնի ուղի »	87 30
Երեւոյ Ռուս »	88 30
Վերջի »	54 20
Հիւր Փրանք »	
Հիւր »	107
Պղինձ »	140

Ա. Գ. Ա. Յ. Ի.

Երեսօրէնայ Սիւն ամառգրին
վերջին յոյնի թուոյն մէջ հետեւ-
եալ կը կարդանք .

Ս. Աթուոյ Տնօրէն Ժողովը Միտ-
քանութեան անգամներէն Գեր. Ներ-
սէս Ծ . և Աստուածատուր վարդա-
պետներն՝ ի վարձատրութիւն իրենց
բազմամեջ հաւատարիմ ծառայու-
թեանց և արժանաւոր հմուտութեանց ,
որոնց ըստ Միտքանութեան ներքին
բարեկարգութեան ծրագրի արա-
մագրութեան , եպիսկոպոսական տա-
սիճանի բարձրացնել , իսկ Արժ .
Ղուկաս վարդապետը ծայրագոյն
վարդապետութեան իշխանութեամբ
պատուել : Սոյն որոշումն Միտքանու-
կան Ընդհ. Ժողովոյ ներկայացուց ,
որ Ղ. Բ. Ծ. նոյն մէջ բաւական վի-
ճարանութենէ զինք քուէից բա-
ցարձակ առաւելութեամբ ընդու-
նեց : Ուստի ամսոյս 11 ին Գեր. Աստ-
ուածատուր և Ղուկաս վարդապետ-
ներն ծայրագոյնութեան աստիճան
ընդունեցին ի Ս. Յակովբ Ամեն . Ս.
Պատրիարքի ձեռնադրութեամբ :
Ամսոյս 20 ին Գեր. Ներսէս Ծ . և
Աստուածատուր Ծ. վարդապետներն
մեկնեցան ի Ս. Էջմիածին ոչնչաք ե-
ղած վկայականներով , եպիսկոպո-
սութեան բարձր և սուրբ աստի-
ճանն ընդունելու , կը մտղմեմք
յիշեալ Ս . Հարց ողջմաք և ուրա-
խութեամբ երթ և դարձ :

Խորագիր

Կիլիկիան անուշտ ազգայինք թէ երկու
տարի առաջ Պանթոմիսի աղետալի հրդե-
հին ժամանակ տեղւոյն Հայ Ժողովրդեան
տուններուն ու խանութներուն հետ հրոյ
ճարակ եղան նաև Ազգ. վարժարանն և
յանուն Ս. Գառուած անի կառուցեալ հո-
յակաղ Ս. Էջմիածին : Մինչև ցարդ դոնէ
այս երկու Սրբազան տաճարներն իրենց
սրբեացաւոր վիճակն ազատելով վերադ-
նելու համար և ոչ ուստեղ օշուկիւն
դուած ըլլալով Պանթոմիսի տակէջ քանի
մի ամիս առաջ Ազգ. Պատրիարքարանի
գիմեց . Պատրիարքարանի անձուկ վիճա-
կը բնակաւորար չկրնալով ուրիւ եղաւ .

նակաւ օգնել, դաւաճել ժողովոց հետ
բանակներով Ազգ. կեդր. վարչութեան
մէջ որդուեցաւ որ շրջաբերական կոնգրէս
և ժողովներով տուեալ մի յանձնուի
մեզ, որպէս զի թէ՛ Կ. Պոլսոյ և թէ՛ Արմա-
կան և Եւրոպական Տաճկաստանի գլխաւ-
ւոր քաղաքները շրջադաշտով հանդանա-
կութեան ձեռնարկենք. թէ՛ պէտ ժամա-
նակիս ձախորդութեան պատճառաւ առ-
ժամա յետագայ մտաբերելով, սակայն
նոյն ձախորդ վիճակը ոչ միայն չ'մեղմա-
ցաւ, այլ ամենայնիւ անորոշ կերպարանք
մի ստանալով անհնարին եղև ապագային
վրայ մեծ յոյսեր առնել, և որովհետև
հրկիզեալ Ա. Եկեղեցւոյն որմերն, որոց 'ի
հիմանց նորոգութիւնը մեծաքանակ զը-
րանի կ'իկարօտի, ըստ վարչութեան ճար-
տարագետաց իւր արդի վիճակին մէջ կըր-
նայ պիտանի և շահաւոր ըլլալ, վերահաս
ձեռնուան եղանակին առաջ յիշեալ որ-
մերը քաղաքներէ՝ ստացուցելու համար
պարտաւարտաճ նորոգութեան միմի-
այն վրան գոցելու համար տեղւոյն օգ-
գայինք միահամուռ փափոք յայտնելով՝
իրենց դառն և բազմակարօտ վիճակին
մէջ անգամ հանդանակութեան սկսելու
որդուի կուտան, ուստի պարտաւորե-
ցանք մեք ևս ձեռնարկել այն հանդանա-
կութեան որով Ա. Ստեփանոս անդին անարատ
կուտին անուանը նուիրեալ Ա. Տաճարը
պիտի վերահանդէս իւր աւերակաց և
միւրոյն վրայ 'ի փառս և 'ի պատիւ Ամե-
նասուր Երրորդութեան, և պիտի շինուի
այն վարժարանն՝ յորում այն ազգաւ ալ
անմեղ մանկութիւն, որ առ 'ի չգոցէ վար-
ժարանի և գրիկ 'ի բարոյական և 'ի մտա-
ւորական դաստիարակութեան գրեթէ
դատարկալիցի կեանք մի կ'փարէ 'ի միտ
իւր ապագային, պիտի ուսանի իւր Ա.
կրօնը, իւր մայրենի չքնաղ լեզուն, իւր
ազգութեան պատմութիւնը և մասաւ-
ւանդ այն բարոյական և քրիստոնէական
գիտութիւնը որ միմիայն կարեօր և իրա-
պէս օգտակար է մեր Ազգին:

Արդ ներկայ գրութեամբս կ'ընենք
ամէն ազգաւոր Հայերու գործունէ և
գլխավորեալ, ծանուցանելով միմեզ ա-
մայն թէ՛ կիրակի օրերը Ա. Եկեղեցեաց
մէջ թաղական շրջագայելէ 'ի դատ, 'ի
գլխավորութիւն ազգայնոց մէկ քառթ մէ-
ծիտի անդորրազեր տալու առաւ նմը
միայն Պօլսոյ համար. այն անդորրազի-
րելը պիտի յանձնենք Ա. Եկեղեցեաց Ա-
ւագ. երկնացի կամայ քաջանայից և կամ
բանակը կեցող դասագումար, որոնք
որ ազգաւորաբար այս հողը ստանձնել
բարեհաճին: Անդորրազիւրը մեր ըս-
տորադրութիւնը կամ կնիքը պիտի կը-
րեն և նուիրատու անձանց անուանքն
իրենց մատուցած նուէրին քանակա-
թեամբը ժողովներով տուեալին մէջ
արձանագրելէ զոտ՝ յատկապէս լրաց-
րաց միջոցաւ ալ պիտի հրատարակուին:
Իսկ գաւառաց մէջ երկրք անդորրազը-
րելու պէտք չըլլալով, ազգին մէկ պաշ-
տօնէին ընկերակցութեամբ տուեալ 'ի
ձեռնին պիտի գրեմք ձեռնհաս ազգայ-
նոց և իւրաքանչիւր գաւառի մէջ հան-
գանակութեան գումարը վաւերացնել
տալով Թաղ. Խորհրդոյն, և եթէ չկան՝
քաջանայից դատուն, ըստ այնմ պիտի
մեկնել անկից:

Այս նախադրութիւնները ձեռք
առնելուս առաջին և գլխաւոր շարժա-
ւորել չարամիտ և ապերախ անձանց
կատարածքներն հետի մնալու փափաքս
հղած է, և երկրորդ պատճառն է առանց
խմբիտութեան և հոգեւորական Ազգ. կեդր.-
վարչութեան որդմանց «Հայաստանեայց»
անուն տարանի մը մէջ դանդաղան նուի-
րատուներ տալու ըլլալ, այս մասին
մեր առած տեղեկութեանց նայելով,
ժողովրդեան հիւրասիրութիւնն ու պար-
զամտութիւնը չարաչար գործածողներ
եղեր են. սակայն մեք հող եղնոր՝ Հայաստակ
Ծ. վարդապետը օրինասէր եկեղեցական
մի ծանցած ըլլալով, և ընկերութեան
անուանը տակ Կ—Յանձնաց աղօրքիւնոր
ձեռնարկին համար տարօրինակ մեկնու-
թեամբը հասարակութիւնը խորհել իր-
մէն շոքաւարով*, պէտք եղած բոլորքը
Ազգ. վարչութեան մատուցանելէ առաջ,

* Իսկ կընէ վարչութիւնն եթէ այդ
վարդապետը Կ. Պօլսոյ կանչէ և չի սուր

քանի մ'աւուր համար անձամբ պիտի
վերադառնամ 'ի Պանտրամ, որպէս զի
կարող ըլլամք մանրամասն տեղեկութիւն
ներ ստանալ: Փափաքելի է մեզ 'ի Նո-
րին Ա. Հայրութիւնը «Հայաստանեայց»
տարանի համար 'ի Պանտրամ ըրած հան-
գանակութեամբը շատանալով՝ անխոր-
հրդարար քանի մի կամակոր և անխո-
հեմ անձանց ծառայած ըլլայ:

Առայժմ այսպիսի միայն ազգարարե-
լով կ'ըզուշացնեմ և յորդոր կը կարգամ
գաւառական համայն պատուարժան ժո-
ղովոց 'ի Ազգ. Պատրիարքարանի ժա-
պաւնիտ տուեալը պաշտօնէի վերայիչ.
եալ նորոտակաւ իրենց ներկայացող ան-
ձերէն:

Խնդրեմ Խմբագիր Տէր, այն կարեւոր
ազգարարութիւնս պատուական թեր-
թիւք մատակայ թիւերէն միոյն միջոցաւ
հրատարակել բարեհաճէք:

Որով եմ մնամ միշտ ազգութարար
ՈՒՅՆ ԳԵՂԱՅԵՅ ՕԳՆԷԼԵՆ
10 օգոստոս 1876
'ի Կ. Պօլսոյ Պարտ

12 օգոստ. 76 ի Ռօտտովո
Տէր Խմբագրապետ.

Մինչդեռ աւետարանական Աստուա-
ծային դերագոյն պատշաճ մէկ կողմա-
նէ բարձրաձայն կը քարոզէ, որ արձա-
կիցէ գլխին իւր. . . և առնիցէ այլ
չնայ, և որ քարձակեալն առնիցէ՝ չնայ,
և միւս կողմանէ եկեղեցւոյ արդարան հայ-
րապետաց զրօթիւնները նոյնը կը հաս-
տատուն և կը հստակեն բացայայտ վար-
դապետութեամբ, և Ազգ. կրօնական
ժողովն ալ անոր հակառակ վարուողե-
րուն վրէժխնդիր կը հանդիսանայ կրօ-
նական: Դովելի նախանձայնութեամբ,
ինչպէս նաև ազգային լրագրութիւններն՝
յորս մանաւանդ ձեր ազգօգուտ թեր-
թիւն ըստ այնմ մասին ժողովոց որո-
շումներն և անաչառ գործադրութիւն
ներն 'ի լուր աշխարհի հրատարակելով,
անոց ամենուն գէթ, քաղաքիս մէջ
Մերապ առնու Քաջանայ մը (արդէն իւր
պժգալի գնացիւք հարաւածանով) իւր ա-
կանջները լոցելով, կուտան կրկնաւա-
նութիւն կապարելու չարիքն ալ գործե-
լու յանդիւրի մօտ ժամանակներս:

Քանի տարի է ի վեր քաղաքս զըտ-
նուող Տէր Յովհաննէսեան Արիւն անուն
երկրապարտը կրօնաւորեալութեան, որ
իւր օրինաւոր ամուսինն 'ի Սամաթիա թա-
ղած էր, նոյնը այս տեղ թաղաւոր Բէժի-
սի Պաշտու (Միայն ծառայ) անուն օրիոր-
դին հետ կը պատկէ առանց ուրուք հը-
րամանի, մանաւանդ թէ արդի առաջ-
նորդական տեղապահ Աթա. Տ. Սրբատա-
կէս Ծ. վարդապետ Ա. հոր քանի մ'օր ա-
ռաջ այս մասին դալ հարցնելէ և անկէ
խտրել արդիւնեւ ետև, որ չըլլայ թէ
այդ պիտի բանի մը ձեռնարկէ, կը լսենք
թէ զվարդապետը համոզելու համար
փառտ ալ լեւերէ է՝ Արտաշէս թաղաւո-
րին իւր նախին թաղաւորն ձգելով Ես-
թերը իրեն թաղաւորն առնելը: Պատիկ զի-
չերուան հետեւեալ օրն երբ այս լուրը
քաղաքիս մէջ տարածուեցաւ, տեղապահ
Ա. հոր ալ ակնաջն հասնելով անմիջապէս
խառն ժողով կը դուստրէ, և կը կանչէ նա
և յիշեալ քաջանայն ու երբ կը հարցն-
քընէ, պատասխան կընդունի թէ՛ «գի-
չերային ժամ 4—5ի միջոցները Սուբիտա-
եան Ցարութիւն խմուենս դալով պիտ ան-
կողմէս հանցք քալի պապիկ պիտի ընես,
ես ամեն բան հողացած եմ ըսելով, իւր
թէ ոչ ոք դատաւար պիտի ըլլայ. ես ալ
դնացի 4 հատ 19նոց ասիկ անուելով շա-
եալ զձեռն լեւայի, առեալ ի յաջն Ա-
ղաւաղ, ըսելով պատիկ արարողութիւնը
կատարեցի. և այսպէս ըրած ըլլալով» հա-

որ «Հայաստանեայց» անունն իւր անձ-
նական շահուն գործիք ընելով՝ դաւա-
ռաց միամիտ ժողովուրդները քամէ: Ծ. Խ.

* Զեմը մոռնար յիշել որ սոյն կրկնա-
մուսնութեան խնդրոյն նկատմամբ Ազգ.-
Պատրիարքի մէջ քարոզարարութեան պաշ-
տօն վարող ակնոցաւոր վարդապետն ալ
քանիցս նամակներ իրկեր է յիշեալ քա-
ջանային, որուն մէկ հատը տեղոյս խա-
սքն ժողովին մէջ կարդացուեալ ալ է:

մար ժողովին մէջ ստորագրութիւն ալ
կուտայ, որուն վրայ ժողովն անմիջապէս
տեղեկագիրը կը պատրաստէ և 'ի Պատ-
րիարքարան կուղղէ առ Ամեն. Սրբազան
Պատրիարք Հայրն. պատկաւարաւ քա-
ջանայն աշնայակս Պատրիարքարան կեր-
թայ 'ի պարտաւարտած տնօրէնութիւն. և
ինչպէս որ իւր սուրի այժմ Ա. Փրկիչ է
եղեր. (ինչպէս ուրիշ անգամ ալ ուրիշ
քրկական յանդանօր մնացած է) և հոն
ազգին թշուառ պատաւարելոց հայրն
պատուաւ տնոց բերնէն խլելով հան-
գիտ կը սկսնի:

Իսկ կրկնամուսնացեալ Արիւն ըստ ու-
րուան և հրամանի ներկայ կեդրոնական
կրօնական պատկառելի ժողովոյ իւր հո-
մանիցն բաժնուեցաւ անվաւր դատուե-
լով իւր վրայ կատարուած պատկէ և յա-
տենի եկեղեցւոյ ևս ծանուցուեցաւ 'ի
չինութիւն գայթակղեալ ժողովրդեան
Ահաւարի տէր խմբագրապետ, քաղա-
քիս մէջ տեղի գտած կրկնամուսնութիւն-
նքն այսպէս կատարուած է, և առ այժմ
կեդրոնական կրօնական ժողովոյ ըրած
տնօրէնութիւնն ու որդուան այլքան ըլ-
լալ ձեզ կը ծանուցանենք: Տեսնենք թէ՛
տակալին թէ՛ պատկոյին և թէ՛ պատկե-
լոց նկատմամբ ինչ արժանաւոր տնօրէ-
նութիւններ օւնի 'ի խրատ և 'ի զղուշու-
թիւն այլոց:

Մնա՛ք . . .
* * *

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԾԱՆՈՒԹՈՒՄ
ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՑ

Պաշտաւաւ Աթա. Առաջնորդէն
առ Ուսումնական Խորհուրդն հա-
սած Գրութեամբ մը, անգղոյն աղ-
դային վարժարանաց համար դատա-
տու մը կուգուի հետեւեալ պայման-
ներով.

Ա. Պարտի Հայրէն և Գաղղիա-
րէն ինչուոց քալ հմուտութիւն ու-
նենալ. ինչպէս նաև կարողութիւն
այլոց աւանդելու արդիւնաւոր կեր-
պով.

Բ. Պարտի վիայական ունենալ
թէ՛ բարոյ լաւութեան և թէ՛ այ-
լուր բրած դատախօսութեան:

Գ. Պարտի մինչև հինգ տարի 10
Օսմ. սովի ամանակաւ աշխատիլ,
(Ճանապարհի ծախք պիտի տրուի
իրեն (30) երեսուն Օսմ. սովի Պօլսէն
ցՊաշտատ):

Այս պայմաններն ընդունող ան-
ձը պէտք է ներկայանայ Ուսումնա-
կան Խորհրդոյ:

6 օգոստոս 1876 (ԿԶԶ)
Խորհրդարան Ղալաթիոյ

ՔԱՂԱԿԻՒՆԵԱՆ ՄԵԽԹԱՐԵԱՆՑ
ՎԱՐՉԱՐԱՆ

Վարժարան՝ Օսմանեան Պետու-
թեան Հասարակաց ուսմանց Տեսչու-
թեան հրամանագրով հաստատուած
է, և Եւրոպիոյ յառաջագէժ վարժա-
րանաց ոճոյն և կերպին վրայ կանո-
նաւորեալ և նորոգ բարեկարգեալ
ձևացած է:

Ուսմանց ընթացքն սկսեալ Պատ-
մութեան, Աշխարհագրութեան և
Ռաւաքանութեան նախնական գիտու-
թիւններէն՝ կ'երթայ ինչուան Երկ-
րաշարութիւն, Գրահաշիւ, Հայուե-
տու մար վաճառականութեան, բնա-
կան պատմութիւն, բնաբանութիւն
(Փիղիք), փիլիսոփայութիւն և Օրէնս-
գիտութիւն:

Առ ժամս վեց լեզու կը սորվին ա-
չակերտք, որք են Հայերէն, Գաղղի-
երէն, Տաճկերէն, Անգղերէն, Յու-
նարէն և իտալերէն: Հայագիւ աչա-
կերտաց վրայ մասնաւոր մտադրու-
թիւն կայ՝ ազգային լեզուին նկատ-
մամբ:

Կը սորվին նկարի ամեն ճիւղերն
ալ, և մանաւանդ ճարտարագետա-
կան ձևերն. մարմնակրթանք, Եւրո-
պական երաժշտութիւն, և դաշնակ
(Բիանոյ) որուն տարեկան առանձին
ծախքն է 10 լիւրա Օսմանեան:

Այս ամեն գիտութեանց և լեզ-
ուաց առանձին ընտիր վարպետներ
ունի վարժարանս: Յառաջագէժ աչա-
կերտք ընդհանրապէս Գաղղիերէն
լեզուաւ կընեն իրենց ընթացքներն:
Բոլոր աշակերտք՝ որոշեալ միջոցնե-
րու Գաղղիերէն լեզուաւ կը խօսին
վարժութեան համար:

Աշակերտաց կրթութեան և մաք-
րութեանը մասնաւոր խնամք ունի
վարժարանս. և կիրակրոյ կարելի ե-
ղածին չափ ուշադրութիւն կայ որ
աննդարար ըլլան և մաքուր:

Աշակերտի մը տարեկան թոշակն
է երեսուն լիւրայ Օսմանեան, որ որո-
շուած չափաւոր գումար մը ըլլալով
փոխութեան մը չկրնար ընդունիլ. և
այս գումարին մէջ բովանդակուած
կը սեպուին գրքի, լուացքի, ուսում-
նական և նկարի նիւթոց ծախքերն
բոլոր:

Սեպտեմբերի մէկին վարժարանը
կը բացուի. աշակերտ ներկայացնել
ուզողներն՝ կրնան հիմակուել տես-
նուիլ Տեսչին հետ շարաւի և կիրակի
օրերն՝ նոյն վարժարանին մէջ 'ի Գա-
ւարժոյ՝ Մօտա պրուէնս:

ՏԵՆԵՆԷՆ ԲԵՆԵՆԷՆ
ՎԵՐԵՆԷՆ ՄԵՆԵՆԷՆ

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ
ԵՂԻՇԵԻ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՐՉԱՆՆԵՆ
ԶԳԵՆԷՆ, ԿԵՐԵՆԷՆ ՏԵՐԵՆԷՆ

Թեոդոսիոյ Անճեւացեաց օրինա-
կէն տպագրեալ այս ընտիր մատե-
նագրութիւնը, որ իւր վերջը պա-
րուսական Պարսկերէն և ուրիշ լեզու-
թիւն բառից բացատրութեամբ մեծ
գիրութիւն կընծայէ ընթերցողաց
և ուսանողաց, այս անգամ՝ փոխա-
նակ 8 շրջի՝ 75 սանթիմի, այսինքն
այսօրուան անցուկ գումարով 4 1/2
դրլի կը ծախուի Եֆէնի—ճամի փողոց
Զիլինկիրէր ճատաէսի թիւ 8, Ս. Ղ.
և Եղաժմանեան գրատունը:

ԶԱՏԻԿ
ԿԱՄ

ՆԱԽԱՍԱՀՄԱՆՈՒԹԻՒՆ
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԱՐԵՆԵԼԵԱՆ

Հեղինակութիւն Վլադիմիր
Թաքման-Բէն Ս. Մօմ-ԵնեՆ

Այն գեղեցիկ վիպասանութիւնն
որ Վլադիմիր հոյակապ հանճարոյ
ծնունդն եղող բաղնաթիւն գործոց
մէջ անգլին գոհար մը համարուած
է, կը գտնուի Եֆէնի—ճամի փողոց
Զիլինկիրէր ճատաէսի թիւ 8, Ս. Ղ.
և Եղաժմանեան գրատունը: Գինն է
1 Փրանք:

ՍԷՎԵՐԻ ՍՈՓՐԻՉԸ
Հեղինակութիւն Պոմարէլի

Առաջ թաքման-Բէն Ս. Մօմ-ԵնեՆ

Այն հրահանգիչ և զուարճալի
գործը կը ծախուի Եֆէնի—ճամի փո-
ղոց, Զիլինկիրէր ճատաէսի թիւ 8
Ս. Ղ. և Եղաժմանեան գրատունը:
Գին 75 սանթիմ:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ
ՀոյսաւեՆ-Են ԿԵՆԵՆԷՆ և ԿԵՆԵՆԷՆ

Կան Ս. Եֆէն-Են:

Կը գտնուի Եֆէնի—ճամի փողոց,
Զիլինկիրէր ճատաէսի թիւ 8, Ս. Ղ.

